



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 09

12 ՀՈՒՆԻՍԻ 2023 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

գ. Փամբակ

Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Սուրեն Կոստանյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռաիսա Մինասյանը

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանյանը, Սամվել Անանյանը, Արայիկ Քոչարյանը, Աշոտ Անտինյանը, Պավլիկ Պապինյանը, Արմենուհի Ոսկանյանը, Արշակ Սրայանը, Գրիգոր Կարապետյանը և Շուշանիկ Հակոբյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը, Սևակ Խաչատրյանը և Նաիրա Հարությունյանը:

Նիստից բացակայում էին.

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Էմմա Գասպարյանը և Սերյոժա Սարգսյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝ Թիանա Բոջուկյանը:

Արձանագրվեց, որ ներկա են ավագանու 12 անդամ և նիստն իրավազոր է:

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սուրեն Կոստանյանը ժամը 13.05-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստ վարողն իր նախաձեռնությամբ առաջարկեց օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես լրացուցիչ 8-13-րդ հարցեր և որոշման նախագծեր հետևյալ բովանդակությամբ .

8. Սերգեյ Գուրգենի Հարությունյանին «Փամբակ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

9. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

10. 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի Վահագնի բնակավայրի բնակիչ Աշոտի Ավթանդիլի Փարեմուզյանի ընտանիքի կազմը և բնակելի տուն ունենալու փաստը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

11. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 154-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

12. Փամբակ համայնքի Դեբետ գյուղի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

13. «Այի Պարկ» կազմակերպությանը Փամբակ համայնքի Լեռնաջուր բնակավայրի տարածքում օրգանական մեղրի արտադրությամբ զբաղվելուն համաձայնություն տալու մասին:

զեկ. Ս. Հակոբջանյան

Քվեարկությամբ, կողմ՝ 12 ձայների համաձայնությամբ որոշման նախագծերն ընդգրկվեց օրակարգում:

**Նիստ վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծով:
Քվեարկությամբ, կողմ՝ 12 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 62-Ա/:**

**Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.
Հաստատված օրակարգը՝**

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի հունիսի 12-ի թիվ 09 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանյան

2. Համայնքային սեփականություն հանդիսացող 06-059-0046-0003 կադաստրային ծածկագրով 0,024501 հա մակերեսով բնակավայրերի այլ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

3. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով հատկացնելուն համաձայնություն տալու, մեկնարկային գտները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

4. Սուսաննա Շավենի Աղաջանյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

6. 2023 թվականի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

7. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

8. Սերգեյ Գուրգենի Հարությունյանին «Փամբակ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

9. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

10. 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի Վահագնի բնակավայրի բնակիչ Աշոտի Ավթանդիլի Փարեմուզյանի ընտանիքի կազմը և բնակելի տուն ունենալու փաստը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

11. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 154-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

12. Փամբակ համայնքի Դերետ գյուղի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

13. «Ապի Պարկ» կազմակերպությանը Փամբակ համայնքի Լեռնաջուր բնակավայրի տարածքում օրգանական մեղրի արտադրությամբ զբաղվելուն համաձայնություն տալու մասին:

զեկ. Ս. Հակոբջանյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող 06-059-0046-0003 կադաստրային ծածկագրով 0,024501 հա մակերեսով բնակավայրերի այլ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Լեռնաջուր գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականության հանդիսացող 06-059-0046-0003 կադաստրային ծածկագրով, 0.024501 հա մակերեսով բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, այլ գործառնական նշանակության հողամասը, ֆոտովոլտային կայանի էլեկտրաէներգիայի բաշխման ցանցին միանալու նպատակով անհրաժեշտ է փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի նպատակային նշանակության, էներգետիկայի գործառնական նշանակության: Առկա է հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 10.05.2023թ-ի N 36 դրական եզրակացությունը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 63-Ա/:

2. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով հատկացնելուն համաձայնություն տալու, մեկնարկային գտները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկում է նախագծով ներկայացված նախկին 3 լոտը ավելացնել ևս 2-ով՝ աճուրդ-վաճառքով օտարել հողատեսքեր 3 լոտով և վարձակալության իրավունքով հատկացնել հողամաս 1 լոտով:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 64-Ա/:

3. ԼՍԵՑԻՆ - Սուսաննա Շավենի Աղաջանյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Ձեկուցողը ներկայացրեց, որ համայնքի ղեկավարին է դիմել Սուսաննա Շավենի Աղաջանյանը, որ իրեն պատկանող 06-023-0235-0003 ծածկագրով 0.1099 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահողը՝ անասնաշենքի կառուցման նպատակով ցանկանում է փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 65-Ա/:

4. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Ձեկուցողը ներկայացրեց, որ հաստիքացուցակում էական փոփոխություններ չի կատարվում, աշխատավարձի ֆոնդը մնում է նույնը, պարզապես համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի «Ավագանու խմբակցության փորձագետ» հաստիքը «Քաղաքացիական աշխատանք իրականացնող անձնակազմ» բաժնից անհրաժեշտ է տեղափոխել «Համայնքային հայեցողական պաշտոններ» բաժին:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 66-Ա/:

5. ԼՍԵՑԻՆ - 2023 թվականի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Ձեկուցողը ներկայացրեց, որ համայնքը և իր ենթակայության տակ գործող ՀՈԱԿ-ները մատուցում են նաև այնպիսի ծառայություններ, որոնք սահմանված չեն տեղական տուրքերի և վճարների մասին ՀՀ օրենսդրությամբ: Այդ պատճառով առաջարկվում է ավագանուն սահմանել Փամբակ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը: Նախագծով ներկայացված հավելվածի 6-9-րդ կետերը առաջարկվեց հանել:

Տեղի ունեցած քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 67-Ա/:

6. ԼՍԵՑԻՆ - Սերգեյ Գուրգենի Հարությունյանին «Փամբակ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը: Զեկուցողը ներկայացրեց, որ ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի մշակույթի զարգացման բնագավառում ներդրած ավանդի, «Մարգահովիտի կրթամարզամշակութային համալիր» ՀՈԱԿ-ի ներքո գործող երաժշտական բաժնի /նախկինում երաժշտական դպրոցի/ գործունեության 46-ամյակի կապակցությամբ Մարգահովիտի նախկին երաժշտական դպրոցի տնօրեն Սերգեյ Գուրգենի Հարությունյանին առաջարկվում է շնորհել «Փամբակ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում:

Տեղի ունեցած քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 68-Ա/:

7. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը: Զեկուցողը ներկայացրեց, որ Փամբակ համայնքի Եղեգնուտ գյուղի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող, 06-036-0101-0053 կադաստրային ծածկագրով 0.03 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ գործառնական նշանակության հողամասը, բջջային կայան կառուցելու նպատակով անհրաժեշտ է փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, կապի հողերի գործառնական նշանակության: Նշված հարցով կազմվել է հողաշինարարական գործ, առկա է հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 25.03.2023թ. թիվ 44 դրական եզրակացությունը:

Տեղի ունեցած քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 69-Ա/:

8. ԼՍԵՑԻՆ - 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի Վահագնի բնակավայրի բնակիչ Աշոտի Ավթանդիլի Փարենուզյանի ընտանիքի կազմը և բնակելի տուն ունենալու փաստը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը: Չեկուցողը ներկայացրեց, որ համայնքի ղեկավարին է դիմել Փամբակ համայնքի Վահագնի բնակավայրի բնակիչ Հայկ Աշոտի Փարենուզյանը, խնդրանքով՝ հաստատել այն փաստը, որ նրա ընտանիքը ունեցել է բնակելի տուն Վահագնի համայնքում /ներկա հասցեն՝ Փամբակ համայնք գ. Վահագնի 8 փող. 14/, որը քանդվել է 1988թ-ի երկրաշարժի հետևանքով և այս պահին նշված հասցեի շինության ներկա վիճակը գնահատվում է անավարտ /կիսակառույց մինչև 50 տոկոս/, իսկ նրա ընտանիքը 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ բաղկացած է եղել 3 անձից: Առկա է նաև դակարանի վճիռը:

Տեղի ունեցած քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 70-Ա/:

9. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 154-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքահրաման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Չեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է բյուջեի եկամուտները ավելացնել 650000 դրամով՝ որպես «Արգիշտի» ՍՊԸ-ի կողմից համայնքին տրամադրվող օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված բնապահպանական գումար: Ծախսային մասով նշված գումարից 250000 դրամը կուղղվի Բազում գյուղում առողջապահական ծրագրերի իրականացման, իսկ 400000 դրամը նույն գյուղի սոցիալ տնտեսական ծրագրերի իրականացման համար:

Դեբետ գյուղում փողոցային լուսավորության ընթացիկ նորոգման համար «Ճանապարհային տրանսպորտ» նախահաշվում ավելացվում է 640000 դրամ, իսկ Ձորագետ գյուղի շենքի տանիքի նորագման համար «Բնակարանային շինարարություն» նախահաշվում ավելացվում է 600000 դրամ: Նշված գումարները համապատասխան ծախսային ուղղություններ ուղղվում է բյուջեի պահուստային ֆոնդից:

Տեղի ունեցած քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 71-Ա/:

10. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի Դեբետ գյուղի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը: Զեկուցողը ներկայացրեց, որ Փամբակ համայնքի Դեբետ գյուղի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող, 06-034-0111-0046 ծածկագրով 0.36447 հա գյուղատնտեսական նշանակության խոտհարք հանդիսացող հողամասը անհրաժեշտ է փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության: Հողամասի նպատակային նշանակության փոփոխություն պահին առկա կադաստրային արժեքի տարբերության համար հողամասի սեփականատեր Աշոտ Ամիրյանին պարտավորեցնել համայնքի բյուջե վճարել 328570 (երեք հարյուր քսանութ հազար հինգ հարյուր յոթանասուն) դրամ: Առկա է հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 25.05.2023թ. թիվ 46 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2023 թվականի հունիսի 8-ի N 01/111.6/04124-2023 գրությունը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 72-Ա/:

11. ԼՍԵՑԻՆ - «Ապի Պարկ» կազմակերպությանը Փամբակ համայնքի Լեռնաջուր բնակավայրի տարածքում օրգանական մեղրի արտադրությամբ զբաղվելուն համաձայնություն տալու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակ համայնքի Լեռնաջուր գյուղի վարչական ղեկավար Սարգիս Հակոբջանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ «Ապի Պարկ» կազմակերպությանը Փամբակ համայնքի Լեռնաջուր բնակավայրի տարածքում՝ ընկերության անդամ սեփականատերերի տարածքում ցանկանում է զբաղվել օրգանական մեղրի արտադրությամբ: Անհրաժեշտ է ստանալ ավագանու համաձայնությունը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:













Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 73-Ա/:



12. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին հարցի նախագիծը:

- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը: Համայնքի ղեկավարը առաջարկեց նախագծով ներկայացված 2023թ-ի հուլիսի 12-ը փոփոխել և հաջորդ նիստի օր նշանակել 2023 թվականի սեպտեմբերի 15-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 74-Ա/:

Փամբակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի օր նշանակել 2023 թվականի սեպտեմբերի 15-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 13.00-ն:

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ	
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ	
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ	
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ	
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ	
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ	
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ	
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ	
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ	
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ	
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ	
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՂ  Ռ. ՄԻՆԱՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք

ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 62-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023Թ-Ի ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ԹԻՎ 09 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին **որոշում է**.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի հունիսի 12-ի թիվ 09 հերթական նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի հունիսի 12-ի թիվ 09 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող 06-059-0046-0003 կադաստրային ծածկագրով 0,024501 հա մակերեսով բնակավայրերի այլ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

3. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն համաձայնություն տալու, մեկնարկային գտները և աճուրդի պայմանները հաստատելու մասին:

4. Սուսաննա Շավենի Աղաջանյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

6. 2023 թվականի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

7. Սերգեյ Գուրգենի Հարությունյանին «Փամբակ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:

8. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

9. 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի Վահագնի բնակավայրի բնակիչ Աշոտի Ավթանդիլի

Փարենուզյանի ընտանիքի կազմը և բնակելի տուն ունենալու փաստը հաստատելու մասին:

10. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 154-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

11. Փամբակ համայնքի Դերետ գյուղի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

12. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի Լեռնաջուր բնակավայրի վարչական տարածքում «ՓԱՄԲԱԿ» ԱՊԻ-ՊԱՐԿ-ի ստեղծմանը հավանություն տալու մասին:

13. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2023 թվականի N 63-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-059-0046-0003 ԿԱԴԱՏՐԱՅԻՆ
ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.024501 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՅԼ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 10.05.2023թ. N 36 դրական եզրակացությունը՝ Փամբակ համայնքի ավագանին՝ **որոշում է**

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Լեռնաջուր գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականության հանդիսացող 06-059-0046-0003 կադաստրային ծածկագրով, 0.024501 հա մակերեսով բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, այլ գործառնական նշանակության հողամասը, ֆոտոլուսային կայանի էլեկտրաէներգիայի բաշխման ցանցին միանալու նպատակով փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի նպատակային նշանակության, էներգետիկայի գործառնական նշանակության:

2. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակության իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

Կողմ -12
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒԾԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0
Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 64-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ
ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ,
ԱՃՈՒՐԴԻ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ, 68-րդ հոդվածներով, «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 12.04.2001թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն:

2. Աճուրդ-վաճառքով օտարվում են հողատեսքեր 5 լոտով.

-Լոտ 1: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-019-0105-0023 ծածկագրով 0.06989 հա գյուղատնտեսական 2-րդ կարգի վարելահող: Մեկնարկային գինը սահմանել 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 2: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-070-0090-0016 ծածկագրով 0.19497 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 1550000 /մեկ միլիոն հինգ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 3: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-019-0105-0023 ծածկագրով 0.0689 հա գյուղատնտեսական նշանակության 2-րդ վարելահող: Մեկնարկային գինը սահմանել 130000 /հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 4: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-059-0009-0002 ծածկագրով 0.40275 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 375000 /երեք հարյուր յոթանասունհինգ հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 5: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-103-0039-0030 ծածկագրով 0.0135 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 20000 /քսան հազար հազար/ ՀՀ դրամ:

Աճուրդի լուտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

3. Վարձակալության իրավունքով, գյուղ. գործունեություն ծավալելու նպատակով, 25 տարի ժամկետով տրամադրվում է գյուղատնտեսական նշանակության հողամաս 1 լոտով.

- Լոտ 1: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-070-0385-0018 ծածկագրով 0.54725 հա գյուղատնտեսական նշանակության 4-րդ կարգի խոտհարք՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ:

Վարձակալության լուտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

Կողմ -12
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 65-Ա

ՍՈՒՍԱՆՆԱ ՇԱՎԵՆԻ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ
հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ
կետով, հաշվի առնելով Սուսաննա Աղաջանյանի հայտը՝
ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրելու մասին, համայնքի
ղեկավարի կողմից տրված նախագծային թույլատրությունը,
ճարտարապետահատակագծային առաջադրանքը Փամբակ համայնքի
ավագանին՝ **որոշում է.**

1. Սուսաննա Շավենի Աղաջանյանին պատկանող 06-023-0235-0003
ծածկագրով 0.1099 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության 3-
րդ կարգի վարելահողը՝ անասնաշենքի կառուցման նպատակով փոխադրել
արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության
օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական
արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

2. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակության
իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի
ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

Կողմ -12
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒԻՆՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0 Ձեռնպահ -0



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.ori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 66-Ա
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՋՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ,
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ
ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
3. Ռեժը կորցրած ճանաչել Փամբակ համայնքի ավագանու 14.02.2023թ-ի թիվ 13-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023թ-ի հուլիս 1-ից:

Կողմ -12
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՇԻ
ՊԱՊՈՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0 Ձեռնպահ -0



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

**ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

1. Քաղաքական պաշտոններ
2. Հայեցողական պաշտոններ
3. Վարչական պաշտոններ
4. Աշխատակազմի քարտուղար

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժին
2. Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին
3. Իրավաբանական, քարտուղարության, անձնակազմի կառավարման և զարգացման ծրագրերի բաժին

Աշխատակազմ (կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված պաշտոններ)

Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ

Քաղաքացիական աշխատանք իրականացնող անձնակազմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ




ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅՎԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
 ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աշխատակիցների թվաքանակը՝ 76 :

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔ ԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ Ը	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓ Ը (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)	ԱՄՍԵԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐՁԻ ՖՈՆԴ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
1.	Համայնքի ղեկավար	1	420 000	420 000
2	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	1	300 000	300 000
3	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	300 000	300 000
	Ընդամենը	3		1 020 000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
4	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	180 000	180 000
5	Ավագանու խմբակցության փորձագետ	1	110 000	110 000
	Ընդամենը	2		290 000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
6	Վարչական ղեկավար մինչև 1000 բն./Ազնվածոր, Անտառամուր, Դեբեդ, Եղեգնուր, Լեռնաջուր, Ձորագետ, Ձորագյուղ, Վահագնածոր, Քարաքերդ	9	195 000	1755 000
7	Վարչական ղեկավար 1000-2000 բն. /Արջուր, Բազում, Լեռնապար, Վահագնի	4	230 000	920 000
8	Վարչական ղեկավար 2000 և ավել բն. /Մարգահովիտ/	1	250 000	250 000
	Ընդամենը	14		2 925 000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
9	Աշխատակազմի քարտուղար	1	320 000	320 000
Քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժին				
10	Բաժնի պետ	1	280 000	280 000
11	Գլխավոր մասնագետ	1	240 000	240 000
12	Առաջարար մասնագետ	1	210 000	210 000
13	Առաջին կարգի մասնագետ	1	180 000	180 000
14	Երկրորդ կարգի մասնագետ	5	150 000	750 000
	Ընդամենը	9		1 660 000

Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին				
15	Բաժնի պեյ /Ֆինանսիստի պարտակ./	1	280 000	280 000
16	Գլխավոր մասնագետ	1	240 000	240 000
17	Առաջատար մասնագետ	1	210 000	210 000
18	Առաջատար մասնագետ	1	210 000	210 000
19	Առաջատար մասնագետ	1	210 000	210 000
20	Առաջին կարգի մասնագետ	1	180 000	180 000
21	Երկրորդ կարգի մասնագետ	1	150 000	150 000
	Ընդամենը	7		1 480 000
Իրավաբանական, քարտուղարության, անձնակազմի կառավարման և զարգացման ծրագրերի բաժին				
22	Բաժնի պեյ	1	280 000	280 000
23	Գլխավոր մասնագետ	1	240 000	240 000
24	Գլխավոր մասնագետ	1	240 000	240 000
25	Առաջատար մասնագետ	1	210 000	210 000
26	Առաջին կարգի մասնագետ	1	180 000	180 000
27	Առաջին կարգի մասնագետ	1	180 000	180 000
22	Երկրորդ կարգի մասնագետ	1	150 000	150 000
	Ընդամենը	7		1 480 000
Աշխատակազմ (կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված պաշտոններ)				
29	Գլխավոր մասնագետ	1	240 000	240 000
30	Գլխավոր մասնագետ	1	240 000	240 000
31	Առաջատար մասնագետ	1	210 000	210 000
32	Առաջին կարգի մասնագետ	2	180 000	360 000
33	Երկրորդ կարգի մասնագետ	13	150 000	1 950 000
	Ընդամենը	18		3 000 000
	Ընդամենը համայնքային ծառայողներ	42		7 940 000
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
34	Վարորդ	1	200 000	200 000
35	Տնտեսավար	1	160 000	160 000
36	Գործավար	1	150 000	150 000
37	Հավաքարար	5	105 000	525 000
	Ընդամենը	8		1 035 000
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
38	Անասնաբույժ	5	150 000	750 000
39	Ավագանու գործավար	խմբակցությունների	105 000	210 000
	Ընդամենը	7		960 000
	ԸՆԴԱՄԵՆԸ աշխատակազմ	76		14 170 000





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 67-Ն

2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ
ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով՝ Փամբակ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Սահմանել 2023 թվականի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Իրավունք վերապահել համայնքի ղեկավարին, համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների համար կիրառել արտոնություններ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -12
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0

Ձեռնպահ -0



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝


ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶՎՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Համայնքի կողմից մատուցվող ծառայության անվանումը	Սահմանված դրույքաչափերը /ՀՀ դրամ/
1.	Սահմանել Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների համար վճարներ՝	
1)	«Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի կողմից սպասարկվող Դսեղ, Դեբետ, Եղեգնուտ, Վահագնաձոր, Փամբակ - Վանաձոր երթուղու ուղևորափոխադրման արժեքը /1 անձի համար, իսկ մինչև 6 տարեկան երեխայի համար անվճար/ սահմանել	
ա.	Դսեղ-Վանաձոր	400
բ.	Դեբետ-Վանաձոր	350
գ.	Եղեգնուտ-Վանաձոր	300
դ.	Վահագնաձոր-Վանաձոր	200
ե.	Փամբակ-Վանաձոր	100
2)	Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղ. տեխնիկայով «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների համար	
ա.	Վար՝ 1 հա-ի համար	50000
բ.	Փխրեցում /ֆրեզ/ 1 հա-ի համար	60000
գ.	Ցորենի ցանքս՝ 1 հա-ի համար	15000
դ.	Կարտոֆիլի ցանքս՝ 1 հա-ի համար	30000
ե.	Թորխ /քախան և բուկլից/ 1 հա-ի համար	30000
զ.	Հակերի կապում՝ 1 հատ	150
է.	Հունձ՝ 1 հա	30000
3)	Համայնքային սեփականություն հանդիսացող տրակտորներով «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների համար	
ա.	Բելառուս մակնիշի տրակտորի աշխատանքը՝ 1 ժամ	12000
բ.	JSB մակնիշի տեխնիկայի աշխատանքը՝ 1 ժամ	15000
2.	«Մարգահովիտի բարեկարգում և սպասարկում» ՀՈԱԿ-ի	

	կողմից գերեզմանափորի ծառայության մատուցման համար սահմանել վճար՝	
1)	համայնքի բնակչի համար	5000
2)	համայնքի բնակիչ չհանդիսացող անձի համար	10000
3.	Սահմանել Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հանդիսությունների սրահները օգտագործման տրամադրելու համար վճարներ՝	
1)	Մեկ օրվա համար	10000
2)	Երկու օրվա համար	15000
4.	Փամբակ համայնքի Արջուտ բնակավայրի համայնքային ջրագծին միանալու համար սահմանել արոնենտային վճար՝	50000
5.	Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հենասյունները վարձակալությամբ տրամադրելու դեպքում յուրաքանչյուր հենասյան համար վարձավճարը սահմանել՝ ամսական	100

Փամբակ համայնքի ղեկավար՝



Ս. Կոստանդյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք

«Լ» Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 68-Ա

ՍԵՐԳԵՅ ԳՈՒՐԳԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ «ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱԿՈՐ
ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՂՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, համաձայն Փամբակ համայնքի ավագանու 02.02.2022թ. թիվ 08-Լ որոշմամբ հաստատված Փամբակ համայնքի ավագանու կանոնակարգի 13-րդ գլխի, հիմք ընդունելով Մարգահովիտ գյուղի վարչական ղեկավարի գեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ **որոշում է.**

«Լ Լոռու մարզի Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի մշակույթի զարգացման բնագավառում ներդրած ավանդի, «Մարգահովիտի կրթամարզամշակութային համալիր» ՀՈԱԿ-ի ներքո գործող երաժշտական բաժնի /նախկինում երաժշտական դպրոցի/ գործունեության 46-ամյակի կապակցությամբ Սերգեյ Գուրգենի Հարությունյանին շնորհել «Փամբակ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում:

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒԿԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 69-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 25.03.2023թ. թիվ 44 դրական եզրակացությունը Փամբակ համայնքի ավագանին՝ **որոշում է.**

1. Փամբակ համայնքի Եղեգնուտ գյուղի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող, 06-036-0101-0053 կադաստրային ծածկագրով 0.03 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ գործառնական նշանակության հողամասը, բջջային կայան կառուցելու նպատակով փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, կապի հողերի գործառնական նշանակության:

2. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակության իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

Կողմ -12
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒԾԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0 Ձեռնպահ -0 •



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 70-Ա

1988 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՀԱԳՆԻ
ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՇՈՏ ԱՎԹԱՆԴԻԼԻ ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ
ԿԱԶՄԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՓԱՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով ՀՀ կառավարության 13.11.2008թ-ի «Աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման, բնակարանային ապահովության առաջնահերթության կարգը հաստատելու մասին» թիվ 1337-Ն որոշմամբ հաստատված կարգի 9.1 կետը, ՀՀ վարչական դատարանի 30.06.2021թ-ի վճիռը (վարչական գործ թիվ ՎԴ 6/0046/05/20), Աշոտ Ավթանդիլի Փարեմուզյանի մահվան մասին ԲԱ 284092 վկայականը, հիմք ընդունելով Վահագնի բնակավայրի բնակիչ Հայկ Աշոտի Փարեմուզյանի 06.06.2023թ-ի դիմումը, Վահագնի բնակավայրի վարչական ղեկավարի 09.06.2023թ-ի թիվ 1198 և 1199 տեղեկանքները, Փամբակ համայնքի ավագանին՝ **որոշում է.**

Փամբակ համայնքի Վահագնի բնակավայրի բնակիչ Հայկ Աշոտի Փարեմուզյանի դիմումը բավարարել.
Հաստատել այն փաստը, որ նրա ընտանիքը ունեցել է բնակելի տուն Վահագնի համայնքում /ներկաիս հասցեն՝ Փամբակ համայնք գ. Վահագնի 8 փող. 14/, որը քանդվել է 1988թ-ի երկրաշարժի հետևանքով և այս պահին նշված հասցեի շինության ներկա վիճակը գնահատվում է անավարտ /կիսակառույց մինչև 50 տոկոս/, իսկ նրա ընտանիքը 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ բաղկացած է եղել 3 անձից.
ինքը՝ Հայկ Աշոտի Փարեմուզյան ծնված 31.08.1980թ.
հայրը՝ Աշոտ Ավթանդիլի Փարեմուզյան մահացած 20.08.2020թ.
մայրը՝ Կարինե Արտավազդի Սաքանյան ծնված 02.01.1959թ.

Կողմ -12	Դեմ -0	Ձեռնպահ -0
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ		
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ		
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ		
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ		
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ		

ՀԱԿՈՐՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐԵԱԿ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք

ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 71-Ն

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 154-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական հնքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 154-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի եկամուտների մասում կատարել փոփոխություն՝ համաձայն հատված 1-ի:

2) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի ծախսերում՝ ըստ գործառնական դասակարգման, կատարել փոփոխություն՝ համաձայն հատված 2-ի:

3) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի ծախսերում՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, կատարել փոփոխություն համաձայն հատված 3-ի:

